ժակք նորա ընդ երախան ձիգ 'ի դուրս կորացեալ որպէս գերանդիք հատուք 'ի ձեղքել զբունս ծառոց։ Բարակք ընդդէմ նորա խիզախեալք մատնէին 'ի ժանիս նորա, և յանդգնագոյնք յորսորդաց 'ի հետամուտն լինել նմա՝ ջիշխէին մատչել 'ի նա։

Ընտիրպէ, թեթևընթաց իբրև ըզհողմ, ոչ ինչ երկեաւ յարձակել 'ի գազանն. և արդնընկէց լեալ, խոցեաց զնա 'ի պառակսն։ Յարենէն՝ որ հոսէր՝ զայրագին և սս գազանն վայրենի կատաղեալ, դարձաւ յոսոխն՝ որ եհարն զնա։ Զի օրիորդին, թէպէտ ամեհի, խրբտուցեալ անդէն յետս նահանջեաց. և հրէշն էրէ անկաւ զնովաւ, որպէս 'ի վերայ ամուր պարսպի բաբան անհեթեթ։ Օ երերի հարեալ սալասմբակն կործանեցաւ. և համակործան ընդ նըմին անկեալ օրիորդն 'ի յերկիր, ոչ և սս կարէր խուսել 'ի մարդախոշոշ ժանեաց գազանին զայրացելոյ ընդդէմ իւր։ Բայց Տելեմաք դէտ կացեալ վտանգին, էջ յերիվարէն. և փայլակնաձև անցեալ ընդ մէջ ձիոյն անկելոյ և վարազուն՝ որ 'ի վրէժ արեանն դիմէր, և գեղարդն 'ի ձեռին ունելով երկայնաբուն՝ մխեաց զայն բոլորատեգ 'ի մնակուշտ ահեղ գազանին, որ տապալեալ անկաւ լի կատաղութեամբ։

„Եւ հատեալ պատանուոյն զկառաւին նորա, որ տակաւին ահ արկանէր 'ի տեսողս և յապուշ զորսորդս կըրթէր, մատոյց Ընտիրպեայ։ Կարմրագունեալ օրիորդն յամօթոյ, ակնարկութեան հօրն ծայրիւք աչացն կայր դէտ. որ 'ի զարհուրանացն յեղափոխեալ 'ի զեղումն ինդութեան ընդ զերծանել դատերն 'ի վտանգէն, ակնարկէր 'ի նա ընդունել զնուէրն։„

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Ռուսաստանի բնակչաց աճումը։ — Ըստ նոր վիճակագրական հաշուի մը, 1840էն մինչև 1854 Ռուսաստանի մէջ քառասուն միլիոն ծնունդ եղեր է և երեսուն միլիոն մահ, որով տասնըհինգ տարուան միջոցին մէջ տասը միլիոն բնակիչ աւելցեր է։ Այսրուան օրս Ռուսաստան 60 միլիոն հոգի ունի, առանց համրելու Լեհաստանի ու Ֆինլանտիոյ մեծ դքսութեան 7 միլիոն բնակիչքը։ Թէ որ 1840-1854 եղած աճումը շարունակէ, 1870ին հոնտեղի բնակիչքը 70 միլիոնի պիտի հասնին, 1900ին 95 միլիոնի, և 2000 տարուոյն 264 միլիոնի։ — 1855 տարուոյն՝ Բեգրպուրկի մէջ 16,092 տղայ ծներ են։

Արքայոյ կարգի ծառեր։ — Ամերիկայի մէջ Ռէտուուտս ըսուած անտառը, որ Եբրորդութեան գոգին մտ է, 1851 տարիէն 'ի վեր արտաքոյ կարգի ընդարձակութեամբ ծառեր գտնուեցան։ Այս ծառերուն մէջ ամենէն աւելի հասոը՝ հարիւր քսան ոտք շրջապատ ունի։ Ուրիշ ծառ մը որ կարուած էր՝ իրեք շաբաթի չափ անձրևներու ժամանակ ապաստանարանի տեղ ծառայեց տասնըեօթը հոգւոյ ու տասնըմինը բեռնաբարձ ջորիներու։ Երկու ծառ ալ, որոնք նաև հաստութեան կողմանէ նշանաւոր են, երկու հարիւր ութսուն ոտք երկայնութեան կը հասնին։

Բարիզս- էրնէլի օրագիրներուն ընկերոյ ՌԻ-ը։ — Իտալական օրագրի մը մէջ կը կարդանք որ ժոսանալ գէ Տէդան 12,000 ընկեր ունի, Բոդրի՝ 20,000 ընկեր, Գոնոդիդիս-իօնէ՝ 18,000, Բեյի՝ 16,000, Ինիօն՝ 8,000, Իսնիվէր՝ 7,000, Կոդէի գը Ֆրան՝ 4,000, Սիեգլը՝ 25,000, Բրէ՝ 33,000, Իմիդրոիօն՝ 40,000, Մի-ղէ գէ Ֆոմիյ՝ 100,000, Ռըվի- գէ Տէ Մօնդ՝ 9,000, Ռըվի- գոնդոնբորդն՝ 2,500, Գոնէ-բօնգան՝ 4,500։ Մոնիդեորի ընկերներուն թիւը ստոյգ չենք գիտեր՝ կ'ըսէ վերոյիշեալ օրագիրը։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ